ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ
«ԵՐԿԻՐ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԴԵՊԻ ԱՐԱՐԱՏ

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՊԱՅՄԱՆ

«Եզերք» մատենաշար, թիվ 1

Երևան 2006

«Հայրենադարձության Մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի Նախագիծ

Բաժին 1. Ընդհանուր դրույթներ

Հոդված 1. Օրենքի կարգավորման նպատակն ու առարկան

Սույն օրենքի նպատակն է ստեղծել նախադրյալներ եւ երաշխիքներ 1915-22 թթ. Մեծ Եղեռնի հետեւանքով Արեւմտյան Հայաստանից տեղահանված, Ղարաբաղյան հակամարտության եւ 1988-ից ի վեր Հայաստանի Հանրապետության շրջափակման հետեւանքով փախստական դարձած եւ այլ պատճառներով արտասահմանյան բազմաթիվ երկրներում բնակվող, Պատմական Հայաստանի եւ արդի Հայաստանի Հանրապետության եւ հայկական այլ տարածքներից արտագաղթած հայերի ու նրանցից սերվող անձանց հայրենիքի մի հատված՝ Հայաստանի Հանրապետություն հայրենադարձվելու համար:

Օրենքը սահմանում է հայրենադարձների նկատմամբ Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության սկզբունքներն, այդ քաղաքականության իրականացման Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինների գործունեության հիմքերը, հայրենադարձի կարգավիճակի ստացման պայմաններն ու կարգը, հայրենադարձի իրավունքներն ու պարտականությունները, հայրենադարձի իրավունքների տնտեսական, սոցիալական եւ իրավական երաշխիքները Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության սահմանադրությանն ու օրենքներին, միջազգային համընդհանուր սկզբունքներին եւ նորմերին համապատասխան:

Օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիության շնորհման պարզեցված կարգ:

Հոդված 2. Հայրենադարձների նկատմամբ պետական քաղաքականության սկզբունքներն ու նպատակները

2.1 Հայաստանի Հանրապետությունն ընդունում է իր պարտավորությունները տարբեր ժամանակահատվածներում Պատմական Հայրենիքի, ներառյալ՝ ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքից արտագաղթած ազգությամբ հայերի հայրենադարձվելու իրավունքի պաշտպանության հանդեպ:

2.2 Հայաստանի Հանրապետությունը հայկական ծագում ունեցող անձանց ու նրանց ընտանիքների համար իրենց պատմական հայրենիք կամավոր վերադարձի պայմաններ է ստեղծում:

2.3. Սույն օրենքը կոչված է նպաստելու ժողովրդագրական իրավիճակի, բնակչության տարաբնակեցման համակարգի բարելավմանն ու երկրի բոլոր շրջանների համաչափ զարգացմանը:

2.4. Սույն օրենքի իրականացումը կոչված է նպաստելու հայրենադարձների մտավոր, ստեղծագործական, աշխատանքային ու սոցիալ-մշակութային ներուժի առավել լիարժեք ծառայեցմանն՝ ի շահ Հայաստանի Հանրապետության ազգաբնակչության համար արժանավայել կյանքի ապահովման ու ազատ զարգացման, երկրում ժողովրդագրական իրավիճակի բարելավման, տնտեսության աճի ու երկրի շրջանների ավելի հավասարակշիռ զարգացման:

2.5. Սույն օրենքի իրականացումը կոչված է նպաստելու սփյուռքում ապրող մասնագիտական, տնտեսական եւ այլ բնույթի ներուժով օժտված հայերին Հայաստանի Հանրապետության զարգացմանը մասնակից դարձնելու բարենպաստ, օրինակարգված հնարավորությունների ու պայմանների ստեղծմանը:

Հոդված 3. Օրենքում կիրառվող հիմնական հասկացությունները

3.1. Հայրենադարձություն: Հայաստանի հետ հոգեւոր կապեր պահպանած, հայ էթնոսին ու մշակույթին իրենց պատկանելությունը գիտակցող եւ Հայաստանը որպես իրենց Հայրենիք ընդունող, ազգությամբ հայերի ու նրանցից սերվող անձանց վերադարձը կամ փոխադրվելը Հայաստանի Հանրապետություն մշտական բնակություն

հաստատելու համար:

3.2. Հայրենադարձ: Հայաստանի Հանրապետություն մշտական բնակություն հաստատել ցանկացող՝

Հայաստանի հետ հոգեւոր կապեր պահպանած, հայ էթնոսին ու մշակույթին իր պատկանելությունը գիտակցող եւ Հայաստանը որպես իր Հայրենիք ընդունող ազգությամբ հայը կամ նրանից սերվող անձը.

նախկինում Արեւմտյան Հայաստանի եւ Օսմանյան կայսրության այլ տարածքներում ապրած եւ 1915 թ. Մեծ Եղեռնից մազապուրծ եղած հայը եւ նրանից սերվող անձը:

ծագումով հայ՝ նախկինում Հայաստանի Հանրապետության կամ ԽՍՀՄ քաղաքացին եւ նրա ընտանիքի անդամները:

հայրենադարձի ընտանիքի անդամներ-հայրենադարձի ամուսին (կին), նրանց երեխաներ ու ծնողներ: Այլ ազգականներ, անաշխատունակ խնամարկյալներ, իսկ բացառիկ դեպքերում՝ նաեւ այլ անձինք եւս կարող են ճանաչվել հայրենադարձի ընտանիքի անդամներ, եթե նրանք համատեղ ապրում են հայրենադարձի հետ եւ վարում համատեղ տնտեսություն:

3.3. Հայրենադարձի մուտքի արտոնագիր: Հայրենադարձի կարգավիճակ ստացած անձանց հատուկ արտոնված ձեւով Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելու իրավունք տվող փաստաթուղթ:

3.4. Հայրենադարձի վկայական: Կարգավիճակ հաստատող փաստաթուղթ, որը տրվում է յուրաքանչյուր հայրենադարձի Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելու պահից մինչեւ 7 օր ժամկետում: Փաստաթուղթն ուժի մեջ է մինչեւ տվյալ անձի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալը կամ այդ վկայականից զրկվելը:

Հոդված 4. Հայրենադարձության ձեւերը

Հայաստանի Հանրապետություն հայրենադարձողները հայրենադարձություն կարող են իրականացնել ըստ հետեւյալ երեք ձեւերի:

4.1. Ձեւ Ա. Հայրենադարձներ, որոնք ինքնուրույն են վճարում իրենց, իրենց ընտանիքի տեղափոխման, իրենց բեռի փոխադրման եւ բնակարանի ձեռքբերման համար: Ձեւ Ա-յով հայրենադարձվող ան-

ձինք կարող են Հայաստանի Հանրապետության տարածքում իրենց բնակության վայրն ընտրել ըստ իրենց հայեցողության:

4.2. Ձեւ Բ. Հայրենադարձվելու ցանկություն ունեցող անձինք, որոնք ի վիճակի չեն ինքնուրույնորեն հոգալու իրենց անձի եւ (կամ) բեռի տեղափոխման ծախսը, ինչպես նաեւ Հայաստանում բնակարանի ձեռքբերման ծախսերը: Այս ձեւով ներգաղթող անձանց եւ նրանց ընտանիքի անդամների տեղափոխումը կարող է իրականացվել պետական միջոցներով: Հայաստանի Հանրապետության տարածքում սեփական բնակարան չունեցող անձինք Ձեւ Բ-ով հայրենադարձվելու իրավունք են ստանում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող բնակավայրերից որեւէ մեկում բնակարան ստանալու եւ մշտապես բնակվելու համաձայնություն տալու դեպքում:

4.3. Ձեւ Գ. Հայրենադարձվել ցանկացող անձինք, որոնք մտադիր են ոչ թե մշտապես, այլ տարվա ընթացքում որոշակի ժամկետով բնակվել Հայաստանի Հանրապետության տարածքում, աշխատանքներ են կատարում կամ ծառայություններ են մատուցում (այդ թվում նաեւ Հայաստանի Հանրապետության պետական իշխանության համապատասխան մարմնի հրավերով) սոցիալական, տնտեսական, մշակութային, գիտա-կրթական եւ այլ բնագավառներում՝ մասնակցելով Հայաստանի Հանրապետության զարգացմանը:

Հոդված 5. Հայրենադարձի ընտանիքի անդամների հայրենադարձվելու իրավունքը

5.1 Հայրենադարձի հետ Հայաստանի Հանրապետության տարածք տեղափոխվելու եւ հայրենադարձի բոլոր իրավունքներով են օժտված նաեւ նրա ընտանիքի անդամները:

5.2. Մինչեւ 18 տարեկան անչափահասների հայրենադարձությունը կատարվում է ծնողների (խնամակալների) հավանությամբ, իսկ 16-ից 18 տարեկան անչափահասներինը՝ նաեւ իրենց՝ անչափահասների համաձայնությամբ:

ԲԱԺԻՆ 2. Հայրենադարձի կարգավիճակ շնորհելու

Հոդված 6. Հայրենադարձի կարգավիճակ ստանալու ընթացակարգը.

6.1. Հայրենադարձվել ցանկացող անձը ներկայանում է տվյալ երկրում գտնվող Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական ծառայություն, որտեղ լրացնում է դիմում ըստ հայրենադարձության ձեւի եւ ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր:

Հայրենադարձի կարգավիճակ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը եւ ձեւերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Ձեւ Գ. Հայրենադարձվելու ցանկություն ունեցող անձանց սկզբնական հաշվառումն իրականացնում է տվյալ երկրում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացչությունը կամ հյուպատոսական ծառայությունը՝ համաձայն ներկայացվող դիմումի: Հաշվառման փաստաթղթերը ուղարկվում են ըստ սույն օրենքի հոդված 18-ում նախատեսված հայրենադարձության ոլորտում պետական քաղաքականության իրականացումը համակարգող Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմնին, որն իր հերթին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետույան պետական իշխանության համապատասխան մարմնին (ներին) մուտքագրված հայտի մասին:

6.2. Ըստ սույն օրենքի 4-րդ հոդվածի 4.2 կետի Բ ձեւի հայենադարձի կարգավիճակ ստանալու համար դիմում ներկայացրած հայրենադարձներն ու նրանց ընտանիքների 16 տարին լրացած անդամները, գրավոր համաձայնություն են տալիս Հայաստանի Հանրապետություն փոխադրվելուց հետո բնակություն հաստատելու երկրի այն տարածաշրջաններում, որոնք նման բնակության համար կերաշխավորվեն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

6.3. Հայրենադարձողի փաստաթղթերը քննելուց հետո, ոչ ուշ քան երեք ամիս ժամկետում, նրան տեղեկացնում են իր դիմումի բավարարման կամ մերժման մասին:

6.4. Հայրենադարձի կարգավիճակ ստացած անձին դիմումը հանձ-

նելու վայրի դիվանագիտական կամ հյուպատոսական հաստատության կողմից տրվում է հայրենադարձի մուտքի արտոնագիր: Հայրենադարձության մուտքի տրված արտոնագիրը մեկանգամյա գործածության համար է եւ գործում է տրվելու օրից մեկ տարվա ընթացքում: Հայրենադարձության մուտքի արտոնագրով Հայաստանի Հանրապետություն մուտքի իրավունքով օժտված են նաեւ հայրենադարձի մուտքի արտոնագիր ստացած անձի ընտանիքի անդամները, որոնց վերաբերյալ տեղեկություններ արդեն տրված են հայրենադարձի կարգավիճակ ստանալու դիմումում:

6.5. Հայրենադարձն ու նրա ընտանիքի բոլոր անդամները Հայաստանի Հանրապետություն մուտք գործելուց հետո ստանում են հայրենադարձի վկայական սույն օրենքի 3-րդ հոդվածի 3.4. կետով սահմանված ժամկետում: Հայրենադարձի վկայական շնորհելու իրավունք ունեցող պետական մարմինը, հիշյալ փաստաթուղթը տալու կարգն ու պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

Հոդված 7. Հայրենադարձվելու իրավունքից օգտվելուց մերժման հիմքերը

7.1. Հայրենադարձվելու դիմումը կարող է մերժվել հետեւյալ հիմքերի առկայության դեպքում.

7.1.1. Հայրենադարձվել ցանկացողի նկատմամբ, իր բնակության երկրում հարուցվել է քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործ:

7.1.2. Հայրենադարձվել ցանկացողի նկատմամբ առկա է իրավասու դատարանի օրինական ուժի մեջ մտած եւ կատարման ենթակա վճիռ:

7.1.3. Հայրենադարձի կողմից իր կեցության երկրում առկա է չկատարված քաղաքացիական-իրավական պարտավորություն, որը հաստատվել է իրավասու դատարանի կողմից օրինական ուժի մեջ մտած որոշումով:

7.1.4. Այն երկրի տարածքում, որտեղ դիմում է ներկայացվել հայրենադարձության կարգավիճակի վերաբերյալ, կամ այլ պետության մեջ կեցության ընթացքում, հայրենադարձի կարգավիճակ ստանալու համար դիմած անձը կատարել է գործողություններ, ուղղված Հայաստա-

նի Հանրապետության ազգային անվտանգության դեմ:

7.1.5. Հայրենադարձվել ցանկացողն ունի անբուժելի վարակիչ հիվանդություն:

7.2. Նախկինում մեկ անգամ արդեն հայրենադարձության մուտքի իրավունք ստացած ու հայրենադարձության վկայականի իրավունքից զրկվածին չի տրվում հայրենադարձության մուտքի նոր արտոնագիր:

7.3. Ձեւ Բ-ով հայրենադաձվել ցանկացողի դիմումը մերժվում է, եթե նա համաձայն չէ մշտական բնակություն հաստատելու վերաբնակեցման համար առաջարկվող բնակավայրերից որեւէ մեկում:

7.4. Հայրենադարձի կարգավիճակ չստանալու դեպքում, նշված կարգավիճակն ստանալու համար դիմած անձը, կարող է եռամսյա ժամկետում բողոքարկել մերժումը, հայտարարելով իր դիմումը՝ հարցի երկրորդ անգամ քննարկման վերաբերյալ: Այդ դեպքում դիմած անձը, ոչ ուշ քան 45 օրից, տեղեկացվում է իրեն հայրենադարձի կարգավիճակ տալու առիթով վերջնական որոշման մասին:

Բաժին 3. Հայրենադարձների իրավունքներն ու պարտականությունները: Հայաստանի Հանրապետություն փոխադրվելու, տեղավորվելու, հասարակությանը համարկվելու համար հայրենադարձներին տրվող արտոնություններ

Հոդված 8. Հայրենադարձների իրավունքներն ու պարտականությունները

8.1.Հայրենադարձի կարգավիճակ ունեցող եւ Հայաստանի Հանրապետությունում գտնվող անձը, մինչեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալն, ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված իրավունքներ եւ կրում է պարտականություններ, բացառությամբ սույն հոդվածի 8.2. եւ 8.3. կետերով սահմանված դեպքերի:

8.2. Հայրենադարձի կարգավիճակով օժտված եւ Հայաստանի Հանրապետությունում գտնվող անձինք, մինչեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալն ընտրական իրավունք չունեն,

չեն կարող Հայաստանի Հանրապետության որեւէ քաղաքական կուսակցության անդամ լինել, չեն կարող ընտրվել կամ նշանակվել այնպիսի պաշտոններում կամ զբաղվել այնպիսի գործունեությամբ, որոնց համար օրենսդրությամբ նախատեսված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիության առկայություն:

8.3. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 4.2. կետի Ձեւ Բ-ի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածք հայրենադարձված անձինք սահմանափակված են ազատորեն բնակության վայր ընտրելու իրավունքում:

8.4. Հայրենադարձի կարգավիճակ ունեցող եւ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող անձը, մինչեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալը, կարող է ընտրել կամ ընտրվել տեղական ինքնավարության մարմիններում, Հայաստանի Հանրապետության օրենստդրությամբ նախատեսված կարգով:

8.5. Զինապարտ-հայրենադարձները պարտավոր են կատարելու իսկական զինվորական ծառայություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար նախատեսված զորակոչային կարգով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համաձայն 27 տարին լրացած, բայց մինչ այդ Հայաստանի Հանրապետության Ազգային Բանակի զորակոչով իսկական զինվորական ծառայությունից խուսափած հայրենադարձներն ազատվում են դրանից ըստ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգի ու պայմանների:

8.6. Հայրենադարձն իր իրավունքներից օգտվելիս եւ պարտականությունները կատարելիս չպետք է վնաս հասցնի Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, այլ անձանց իրավունքներին, ազատություններին եւ օրինական շահերին, Հայաստանի Հանրապետության հասարակական կարգին, ընդհանուր բարեկեցությանն ու անվտանգությանը:

Հոդված 9. Հայրենադարձներին տրվող արտոնություններ

9.1. Հայրենադարձի մուտքի արտոնագիրն անվճար է:

9.2. Հայրենադարձի մուտքի արտոնագիր ունեցող անձն ազատվում է իր եւ իր ընտանիքի անդամների գույքի տեղափոխման համար

բոլոր տեսակի մաքսային գանձումներից:

9.3. Այն դեպքում, եթե հայրենադարձվել ցանկացող անձը հնարավորություն չունի ինքնուրույն հոգալ իր անձի, ընտանիքի անդամների եւ բեռի փոխադրման ծախսերը, ձեւի Բ-ի պայմանների շրջանակներում, հայրենադարձի դիմումի համաձայն, դրանց փոխադրման ծախսերը հոգում է պետությունը:

9.4. Այն դեպքում, եթե հայրենադարձվել ցանկացողը հնարավորություն չունի Հայաստանի Հանրապետությունում ինքնուրույն ձեռք բերելու բնակարան, Բ. ձեւի պայմանների շրջանակներում, նրան առաջարկվում է այն բնակավայրերի ցանկը, որտեղ հնարավոր է հատկացնել անվճար բնակարան:

9.5. Հայրենադարձի Բ ձեւով կարգավիճակ ստացած անձանց համար, սույն օրենքով չնշվող, այլ արտոնությունների ցանկը յուրաքանչյուր տարի սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Հոդված 10. Հայրենադարձների հարմարմանն (ադապտացմանը) եւ հասարակության մեջ համարկմանն (ինտեգրմանը) ուղղված միջոցառումներ

10.1. Հայրենադարձների համար մայրենի լեզվի եւ պատմության ուսուցման դասընթացներն անվճար են:

10.2. Հայրենադարձների դպրոցական տարիքի երեխաներն ըստ ծնողների ցանկության կարող են սովորել հանրակրթական դպրոցներում հատուկ կրթական ծրագրով, որոնցում հաշվի են առնվելու հայոց լեզվին նրանց տիրապետման մակարդակը:

10.3. Ձեւ Բ-ով ներգաղթած հայրենադարձների համար պետական պատվերի շրջանակներում յուրաքանչյուր տարի անվճար հիմունքներով որոշակի քանակությամբ տեղեր են հատկացվում Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում:

10.4. Եթե հայրենադարձն ու նրա ընտանիքի աշխատունակ անդամները չունեն որեւէ մասնագիտություն կամ ունեն մասնագիտություն, որը տեղի աշխատանքային շուկայում պահանջարկ չունի, պետական համապատասխան մարմինները պետք է կազմակերպեն կամ ստեղծեն

անհրաժեշտ պայմաններ հայրենադարձի եւ նրա ընտանիքի աշխատունակ անդամների մասնագիտական վերապատրաստության համար:

10.4. Հայրենադարձների մշտական բնակավայրերի տարածքների համար հաստատվում են վարկավորման ու սուբսիդավորման արտոնյալ կարգեր բնակարաններ կառուցելու համար, արտոնյալ կարգեր հարկման եւ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից որոշվող սոցիալ-տնտեսական այլ արտոնություններ:

Հոդված 11. Հայրենադարձի կարգավիճակ ստացած անձանց իրավունքների երաշխիքները

Հայրենադարձը, սույն Օրենքով եւ Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենսդրությամբ իրավունքներից ու ազատություններից օգտվելու ընթացքում, գտնվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության տակ, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով:

Բաժին 4. Հայրենադարձների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ստացման կարգը: Հայրենադարձի կարգավիճակի դադարեցման հիմքերը

Հոդված 12. Հայրենադարձին Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու կարգը

12.1. Հայրենադարձն ու նրա ընտանիքի անդամները Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանում են այն կարգի համապատասխան որը նախատեսված է Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիության մասին» օրենքով եւ այլ համապատասխան նորմատիվ-իրավական ակտերով:

12.2. Հայրենադարձը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն է ստանում հայրենադարձվելուց հետո առավելագույնը մեկ տարի ժամկետում, հետեւյալ պայմանների առկայության դեպքում.

12.2.1. Եթե Հայաստանի Հանրապետություն ժամանելուց հետո, մեկ տարվա ընթացքում կանխամտածված հանցագործության հա-

մար չի ենթարկվել քրեական պատասխանատվության:

12.2.2. Յուրացրել է հայոց լեզուն:

12.3. Օտարերկրյա քաղաքացի, ազգությամբ հայ յուրաքանչյուր ոք երկքաղաքացիության սկզբունքով ՀՀ քաղաքացիություն ստանալու իրավունքից կարող է օգտվել միայն նախկինում հայրենադարձի կարգավիճակ ունենալու դեպքում:

Հոդված 13. Հայրենադարձի կարգավիճակի դադարեցումը

Հայրենադարձն իր կարգավիճակը կորցնում է հետեւյալ դեպքերում.

13.1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու պահից.

13.2. Այլ երկիր մեկնելուց հետո, բացառությամբ ուսումնառության նպատակներով, կարճաժամկետ աշխատանքային գործուղղմամբ եւ ոչ երկարատեւ բնույթ կրող ու Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս մշտական բնակության նպատակի հետ չկապված այցերից:

Անձիք, որոնք ստացել են հայրենադարձի կարգավիճակ համաձայն Գ ձեւի, պետք է նախքան Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալը մեկ տարվա ընթացքում առնվազն 90 օր գտնվեն Հայաստանի Հանրապետության տարածքում:

13.3. Եթե բացահայտվի, որ հայրենադարձի կողմից ներկայացված փաստաթղթերը, որոնց հիման վրա նրան հայրենադարձության անցագիր, իսկ հետագայում հայրենադարձի վկայական տալու որոշում է ընդունվել, չեն համապատասխանում իրականությանը, բովանդակում են կեղծ տեղեկություններ եւ հենվում կեղծված փաստաթղթերի վրա, ինչը նախօրք հայտնի է եղել հայրենադարձին, ինչպես նաեւ, եթե հայտնաբերվեն նոր փաստական հանգամանքներ հայրենադարձի կողմից Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակության շրջանում, ինչի արդյունքում տվյալ անձին հայրենդարձի կարգավիճակ, իսկ հետագայում քաղաքացիություն շնորհելը կհակասի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն ու ազգային անվտանգության շահերին:

Բաժին 5. Հայրենադարձության հարցերը կարգավորող Հայաստանի Հանրապետության պետական մարմինները

Հոդված 14. Հայաստանի Հանրապետության կառավարություն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայրենադարձության ոլորտում սահմանում է ներքին քաղաքականության հիմնական ուղղությունները եւ ապահովում դրանց իրականացումը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը

14.1. Ապահովում է Կառավարության, նախարարությունների, կառավարման այլ մարմինների ընդունած ակտերի սույն օրենքին համապատասխանեցումը:

14.2. Հաստատում հայրենադարձի կարգավիճակի ձեռքբերման համար անհրաժեշտ դիմումի ու փաստաթղթերի ցանկը, ձեւն ու նմուշօրինակներն ըստ սույն Օրենքի 6-դ հոդվածի 6.1., 6.2., 6.4., եւ 6.5 կետերի:

14.3. Հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական իշխանության լիազոր մարմին սույն Օրենքի 6-րդ հոդվածի 6.5 կետի դրույթներն իրականացնելու հարցերով:

14.4. Ընդունում է սույն Օրենքի կիրառկումն ապահովող որոշումներ:

Հոդված 15. Արտասահմանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններ եւ հյուպատոսական հաստատություններ:

Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հաստատություն:

15.1. Ընդունում է հայրենադարձի կարգավիճակի շնորհման դիմումներ, վարում տրված դիմումների ու սույն Օրենքի 6-րդ հոդվածի

6.2-րդ կետում նշված գրավոր համաձայնությունների գրանցում:

15.2. Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ու նյութերն ուղարկում է Հայաստանի Հանրապետություն հայրենադարձի կարգավիճակ շնորհելու որոշում ընդունող մարմնին:

15.3. Խնդրագիր ներկայացնողին տեղեկացնում է նրա նկատմամբ ընդունված որոշման մասին, համապատասխան սույն օրենքի 7-րդ հոդվածի 7.4. կետի միջոցներ ձեռնարկում ապահովելու դիմում ներկայացնողի իրավունքները:

15.4. Ձեւակերպում է հայրենադարձության վկայականի հանձնումը:

15.5. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն համապատասխան ձեռնարկում է այլ միջոցներ:

Հոդված 16. Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինները ազգային անվտանգության եւ հասարակական կարգի ոլորտում:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության եւ հասարակական կարգի պահպանության ոլորտի մարմինները.

16.1. Վարում են դիմումների, որոշումների եւ հրահանգների գործերի կենտրոնացված գրանցում:

16.2. Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն անհրաժեշտ միջոցառումներ են ձեռնարկում հայրենադարձության մուտքի արտոնագիր տալու հետ կապված հարցերի լուծման համար:

16.3.Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ համագործակցաբար հայրենադարձության մուտքի արտոնագիր տալու կամ հայրենադարձության կարգավիճակ ստանալու դիմումը մերժելու որոշումներ ընդունում:

Հոդված 17. Հայաստանի Հանրապետության պետական մարմինները սոցիալ տնտեսական եւ տարածքային կառավարման ոլորտներում

17.1. Ապահովում են Հայաստանի Հանրապետության հայրենադարձության ոլորտում վարվող քաղաքականությունը սույն Օրենքի 2-

րդ հոդվածում ամրագրված սկզբունքներին ու նպատակներին համապատասխան:

17.2. Իրենց լիազորությունների շրջանակներում ընդունում տարեկան ծրագրեր հայրենադարձության ոլորտում իրականացման համար եւ ապահովում դրանց իրագործումը:

Հոդված 18. Հայրենադարձության ոլորտում պետական քաղաքականության հարցերը համադրող Հայաստանի Հանրապետության պետական մարմինը

18.1. Հայրենադարձության հարցերը համաուղղում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթեր Հայրենադարձության վարչությունը:

18.2. Յուրաքանչյուր տարի վարչությունը մշակում եւ կառավարության հաստատմանն է ներկայացնում Հայրենադարձության տարեկան ծրագիր, որը պետք է ներառի.

18.2.1 Այն բնակավայրերի ցանկը, ուր հայրենադարձներին կհատկացվի անվճար բնակարան:

18.2.2 Բյուջեով ֆինանսավորվող հայրենադարձվող ընտանիքների քանակը եւ համապատասխան գումարները:

18.3. Հայրենադարձության վարչությունը վարում է հայրենադարձվելու դիմում ներկայացրած անձանց տվյալների բազան: Ուղարկում է ըստ Զեւ Գ-ի հայրենադարձվել ցանկացող, Հայաստանի Հանրապետության անհրաժեշտ մասնագիտության ու որակավորման տեր անձանց տվյալները Հայաստանի Հանրապետության պետական համապատասխան մարմիններ հետագա համագործակցության ճանապարհները հստակեցնելու համար:

18.4. Տարվա ընթացքում, ֆինանսավորման այլ աղբյուրների առկայության դեպքում, կառավարությանն առընթեր հայրենադարձության վարչությունը կարող է ներկայացնել հայրենադարձության նոր ծրագրեր:

Հոդված 19. Հայրեդարձության գործընթացի ֆինանսավորման աղբյուրները

19.1. Հայրենարձության գործընթացը ֆինանսավորում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից:

19.2. Հայրենադարձության գործընթացի ֆինանսավորման համար լրացուցիչ միջոցներ ներգրավելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետք է ստեղծի հայրենադարձության հատուկ հիմնադրամ:

Բաժին 6. Պատասխանատվություն օրենքի խախտման համար

Հոդված 20. Պատասխանատվություն օրենքի խախտման համար

Սույն Օրենքի պահանջները խախտող անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բաժին 7. Եզրափակիչ դրույթներ

Հոդված 21. Օրենքի հակադարձ ուժը

Սույն օրենքն ունի հետադարձ ուժ: Օրենքի ընդունումից առաջ, մուտքի սովորական արտոնագրով Հայաստանի Հանրապետությունում հաստատված, ծագումով հայերը նույնպես կարող են դիմել հայրենադարձի կարգավիճակ ստանալու համար: Հայաստանի Հանրապետությունում նրանց անցկացրած ժամկետը հիմնավոր ժամկետ է համարվում երկքաղաքացիություն շնորհելու համար:

Հոդված 22. Օրենքն ուժի մեջ մտնելը

Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում նրա պաշտոնական հրապարակումից հետո տասներորդ օրը:

Հեղինակներ՝ **Արսեն Արծրունի**
Սեւակ Արծրունի
Ռոբերտ Թաթոյան
Վարուժան Փամբուխչյան

Խմբագիր՝ **Ռոբերտ Թաթոյան**

Երեւան
Ապրիլ, 2006

«ԵՐԿԻՐ» ՀԿ Գրասենյակ
Հեռ. (010) 211021
էլ. փոստ՝ yezerk@yerkir.org
կայք՝ www.yerkir.org